



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության
Հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր՝ Վ.Սարգսյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր՝ Մ.Մակյան

2025 թվականի դեկտեմբերի 10-ին

քաղաք Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն
հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ
դատարան),

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Ս.ԶԻՉՈՅԱՆԻ
Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ
Ռ.ՄԻԽԹԱՐՅԱՆԻ
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ [REDACTED]
[REDACTED] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ
նաև՝ Վերաքննիչ դատարան)՝ 2025 թվականի փետրվարի 10-ի որոշման դեմ
պաշտպան [REDACTED] հատուկ վերանայման վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2018 թվականի հուլիսի 2-ին [REDACTED]

[REDACTED] 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ [REDACTED] քրեական գործը՝ [REDACTED] ընկերության կողմից [REDACTED] ՀՀ դրամ գումարի չափով պակաս հարկեր վճարելու դեպքի առթիվ:

2024 թվականի սեպտեմբերի 5-ին՝ [REDACTED]

[REDACTED] կողմից որոշում է կայացվել [REDACTED] նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2024 թվականի սեպտեմբերի 19-ին [REDACTED]

[REDACTED] կողմից որոշում է կայացվել ազատության մեջ գտնվող մեղադրյալ [REDACTED] ձերբակալելու մասին:

2024 թվականի սեպտեմբերի 20-ին՝ ժամը 16:10-ին, մեղադրյալ [REDACTED] ձերբակալվել է:

Նույն օրը [REDACTED] մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2. ՀՀ հակակոռուպցիոն դատարանի (այսուհետ՝ նաև՝ Առաջին ատյանի դատարան)՝ 2024 թվականի սեպտեմբերի 21-ի որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարվել է մասնակի, և մեղադրյալ [REDACTED] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը՝ 1 (մեկ) ամիս ժամկետով:

3. Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ մեղադրյալ [REDACTED] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգվել է 2 (երկու) ամսով՝ մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

4. Առաջին ատյանի դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը բավարարվել է մասնակի, և մեղադրյալ [REDACTED] նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց է կիրառվել տնային կալանքը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:

5. [REDACTED]

[REDACTED] և մեղադրյալ [REDACTED] պաշտպան [REDACTED] հատուկ վերանայման բողոքների քննության արդյունքում Վերաքննիչ դատարանն իր 2025 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ

Առաջին ատյանի դատարանի որոշումը մասնակի բեկանել և կայացրել է դրան փոխարինող դատական ակտ՝ բավարարելով [REDACTED]

[REDACTED] միջնորդությունը, և մեղադրյալ [REDACTED] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգել է 2 (երկու) ամսով՝ դրանում հաշվակցելով մեղադրյալի տնային կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը:

6. Վերաքննիչ դատարանի 2025 թվականի փետրվարի 10-ի որոշման դեմ մեղադրյալ [REDACTED] պաշտպան [REDACTED] հատուկ վերանայման վճռաբեկ բողոք է բերել, որը Վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքի հիմքերը, դրանք հիմնավորող փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

7. Բողոքի հեղինակը նշել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել դատական սխալ՝ միջազգային պայմանագրի, նյութական օրենքի և քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք ազդել են վարույթի ելքի վրա:

7.1. Բողոքաբերի պնդմամբ Վերաքննիչ դատարանի որոշմամբ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-3-րդ մասերով, 118-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ մասերով, 123-րդ հոդվածով, 288-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով, 359-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պահանջները: Բողոքաբերը մասնավորապես նշել է, որ [REDACTED] նկատմամբ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ քրեական հետապնդումը բացառող հանգամանք, ինչպես նաև փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից չեն հիմնավորվել և դատարանների կողմից պատճառաբանված չեն հաստատվել ՀՀ քրեական դատավարության 116-րդ հոդվածով նախատեսված իրավաչափության մնացյալ պայմանները, [REDACTED] օրինական վարքագիծն ապահովելու համար խափանման միջոց տնային կալանքի կիրառման անհրաժեշտությունը բացակայել է, այլընտրանքային խափանման միջոցների կիրառման հարցը դատարանի կողմից պատշաճ քննարկման առարկա չի դարձվել և խափանման միջոցի տեսակն ընտրելիս հաշվի չեն առնվել մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները:

7.2. Ըստ բողոքաբերի՝ [REDACTED] ազատությունից զրկվել է օրենքով չնախատեսված կարգով, վարույթն իրականացնող մարմինը չի հիմնավորել վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից գործադրված պատշաճ ջանասիրությունը (due diligence), ինչպես նաև նրա նկատմամբ քրեական հետապնդումը շարունակելու անհրաժեշտությունը:

Բողոքաբերը նշել է նաև, որ թվարկված խախտումներն իրենց հերթին հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-18-րդ հոդվածներով սահմանված սկզբունքների խախտման, մասնավորապես Վերաքննիչ դատարանի կողմից չի ապահովվել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը, [REDACTED] նկատմամբ դրսևորվել է խտրական վերաբերմունք, խախտվել է նրա անմեղության կանխավարկածը, նրա նկատմամբ հարկադրանքի միջոցները չեն կիրառվել օրենքով սահմանված հիմքերով և կարգով, նրան ազատությունից զրկելը կրում է պատժի նպատակ, հարկադրանքի միջոց ընտրելիս դատարանները չեն առաջնորդվել նվազագույնի սկզբունքով, նա ազատությունից զրկվել ու կալանքի տակ է գտնվում անհիմն ու ապօրինի:

7.3. Բողոքաբերի գնահատմամբ Վերաքննիչ դատարանը ճիշտ չի կիրառել միջազգային պայմանագիրը, այն է՝ հաշվի չի առել, որ [REDACTED] տնային կալանքի կամ կալանքի տակ պահելը չի համապատասխանում «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա»-«զ» կետերով սահմանված հիմքերին, դրանք չեն իրականացվել օրենքով սահմանված կարգով՝ նյութական և դատավարական կանոնների պահպանմամբ: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ անձը կարող է նշված կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետի հիմքով գտնվել տնային կալանքի կամ կալանքի տակ միայն քրեական վարույթի շրջանակում և [REDACTED] նկատմամբ կիրառել է կալանք՝ պատշաճ քրեաիրավական որակմամբ նախաձեռնված և ընթացքի մեջ գտնվող քրեական վարույթի բացակայության պայմաններում: Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ [REDACTED] վերագրված և մեղսագրված փաստերը ողջամտորեն չեն համարվում քրեական օրենսգրքում հանցավոր վարքագիծը նկարագրող հոդվածներից որևէ մեկին համապատասխանող փաստեր, դատարանին չեն ներկայացվել օբյեկտիվ դիտորդին բավարարող փաստերի կամ տեղեկությունների առկայություն մասին տվյալներ, որ [REDACTED] կարող է հանցագործություն կատարած լինել, իսկ «հիմնավոր կասկածն» ակնհայտորեն չի կարող գոյություն ունենալ, եթե նրան մեղսագրվող արարքները կամ փաստերը հանցագործություն չեն եղել այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունեցել:

7.4. Բողոքաբերի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը վարույթի կարևորագույն փաստերի իրական քննություն չի կատարել և եկել է սխալ եզրահանգման՝ քաղաքացիաիրավական օրինական գործարքներին հաղորդելով քրեաիրավական տեսք, անհիմն արձանագրելով հիմնավոր կասկածի, կալանքի հիմքերի, պատշաճ ջանասիրության առկայությունը և [REDACTED] նկատմամբ կիրառելով կալանք: Մինևույն ժամանակ, ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ [REDACTED] կալանքի տակ պահելու հիմքեր առկա չեն, և առավել ևս դրանք չեն պահպանվում նոր հանգամանքների լույսի ներքո՝ հաշվի առնելով նրա՝ արդեն իսկ անազատության մեջ անցկացրած ժամանակը, իսկ քրեական հետապնդման ժամկետները լրացել են, որպիսի պայմաններում վիճարկվող որոշմամբ խախտվել են [REDACTED]՝ «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 18-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները:


7.5. Բողոքաբերը նշել է նաև, որ փոխվել է [REDACTED] առողջական վիճակը և առկա է հիվանդություն, որը խանգարում է կալանավորմանը, նա ունի մշտական խնամքի կարիք, վերջինս պատշաճ բուժօգնություն չի ստանում: Մասնավորապես [REDACTED] մոտ աշխտորոշվել է [REDACTED]
[REDACTED]
[REDACTED]
[REDACTED]
[REDACTED]


[REDACTED] Նման հիվանդություններով տառապող [REDACTED] կալանքի տակ պահելով՝ պետությունը չի կարողանում իրագործել ազատությունից զրկված անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը, այդ թվում՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով, պաշտպանելու իր՝ «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված պարտականությունը, վերջինս ենթարկվում է այնպիսի ծանրության տառապանքների կամ զրկանքների, որը գերազանցում է կալանքի տակ գտնվելուն ներհատուկ տառապանքի անխուսափելի աստիճանը:

8. Ամփոփելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2025 թվականի փետրվարի 10-ի որոշումը՝ կայացնելով նոր դատական ակտ:

Հատուկ վերանայման վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

9. [REDACTED] նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2021





[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

[REDACTED]

(...)»¹:

10. Առաջին ատյանի դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 20-ի դատական ակտում արձանագրել է հետևյալը. «(...) Հիմք ընդունելով «հիմնավոր կասկած» հասկացության վերոգրյալ բաղադրիչները և դրանք համադրելով սույն միջնորդությանը կից ներկայացված նյութերի հետ՝ Դատարանը փաստում է, որ այն առերևույթ (prima facie) առկա է և բավարար խափանման միջոցի կիրառման համար: Նշված հետևության գալու համար Դատարանը հիմք է ընդունում հետևյալ փաստական հանգամանքները, որոնց համաձայն՝

¹ Տե՛ս նյութեր, հատուր 4-րդ, թերթեր 438-447:

Դատարանը հիմնավոր կասկածի շարունակական առկայության վերաբերյալ հետևության հանգում է գործում առկա ապացույցները, փաստերը և տեղեկությունները համակցության մեջ գնահատելու արդյունքում:

(...)

Միևնույն ժամանակ, սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք չեն պարունակում այնպիսի ակնհայտ տվյալներ, որոնք թույլ կրային դատավարության սույն փուլում արձանագրելու հիմնավոր կասկածի բացակայությունը:

(...)

Այս համարեքստում հարկ է նաև նկատել, որ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը, իր հերթին, պաշտպաններ [REDACTED] և [REDACTED], ինչպես նաև [REDACTED]

հարույժ վերանայման բողոքների հիման վրա դատական վերանայման ենթարկելով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ ՀԿԴ/0181/06/24 որոշումը, արձանագրել է, որ. «(...) [Վ]արույթի նյութերում առկա փաստական տվյալներն ու տեղեկությունները վարույթի քննության տվյալ փուլում ողջամրորեն բավարար էին իրավաչափ հետևության գալու այն մասին, որ մեղադրյալ [REDACTED] առնչություն ունի իրեն վերագրված արարքներին, և դեպքերը համընկնում են այն ենթադրյալ հանցանքներին, որոնց կատարման մեջ [REDACTED] մեղադրվում է:

(...)

Դատարանն արձանագրում է նաև, որ մեղադրյալ [REDACTED] նկատմամբ կիրառված խափանման միջոցի ժամկետը 2024 թվականի հոկտեմբերի 19-ին երկու ամսով երկարաձգելուց հետո ի հայտ չեն եկել (այդպիսիք, առնվազն, Դատարանին չեն ներկայացվել) այնպիսի նոր էական հանգամանքներ, որոնց հաշվառմամբ հնարավոր կլինեք սույն փուլում արձանագրել հիմնավոր կասկածի բացակայությունը:

(...)

(...) [Դ]ատարանն արձանագրում է, որ.

- սույն գործով նախաքննությունը չի գրնվում սկզբնական՝ ապացույցների ակտիվ հավաքման փուլում, այլ, ըստ էության, գրնվում է ավարտական փուլում (նշված պնդումն ուղղակիորեն բխում է սույն միջնորդությունից, որում Քննիչն արձանագրել է առաջիկա երկու ամսվա ընթացքում [REDACTED] նկատմամբ վարույթն անջատելու և վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ դատախազին հանձնելու իր նպատակադրվածության մասին),

- նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարված մեծածավալ քննչական և վարույթային այլ գործողությունների արդյունքում արդեն իսկ պարզվել են քրեական վարույթի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ (օրինակ՝ պարզվել են ենթադրյալ հանցանքների կատարմանն առնչություն ունեցած անձինք),

- հանցանքների կատարմանն առնչություն ունեցած անձանց նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, վերջիններս հարցաքննվել են,

- հարցաքննվել են նաև ենթադրյալ հանցագործությունների դեպքերի մասին այս կամ այն կերպ տեղյակ անձինք,

- գործում առկա են այնպիսի օբյեկտիվ փաստական տվյալներ, որպիսիք հնարավորություն են տալիս Դատարանին հետևության գալու «հիմնավոր կասկածի» առկայության մասին:

ՄԻԵԴ-ը բազմաթիվ որոշումներում արձանագրել է, որ քննությանը խոչընդոտելու վերաբերյալ ենթադրությունը, եթե անգամ հիմնված է իրական միավախությունների վրա, ապա արդարացված է լինում միայն նախաքննության սկզբնական փուլում, իսկ առանձնակի բարդություն ներկայացնող գործերի դեպքում խոչընդոտելու միավախությունը ժամանակի ընթացքում նվազում է և այլևս չի կարող հիմք հանդիսանալ շարունակական կալանքն արդարացնելու համար, առավել ևս այն դեպքերում, երբ կատարվել են տրուգումներ և հարցաքննվել են վկաներ (տես՝ W. V. Switherland, judgment of 26. January 1993, p. 33-35, ինչպես նաև՝ Clo Clooth v. Belgium no.12718/87, judgment of 12. December 1991, p. 43):

Տվյալ դեպքում, երբ շուրջ 6 (վեց) տարի տևած նախաքննության ընթացքում մեծածավալ քննչական և վարույթային այլ գործողությունների կատարման արդյունքում բացահայտվել են ենթադրյալ հանցագործությունների դեպքերը, պարզվել են դրանց առնչություն ունեցած անձինք, որոնք հարցաքննվել են, պարզվել են նաև ենթադրյալ հանցագործությունների դեպքերի մասին տեղեկություններ ունեցող անձինք, որոնք նույնպես հարցաքննվել են, ազդարարվել ու զննվել են անհրաժեշտ փաստաթղթերը, ուստի ակնհայտ է, որ կալանավորում կիրառելու կամ դրա ժամկետը երկարաձգելու որոշումներ կայացնելու օրվա դրությամբ առկա է իրավիճակի զգալի փոփոխություն՝ երկարատև և շարունակական կալանավորման հիմքի էական նվազում:

Այլ կերպ, վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք են բերվել այնպիսի փաստական տվյալներ, որոնց վրա մեղադրյալն օբյեկտիվորեն ազդեցություն ունենալ այլևս չի կարող, որպիսի պայմաններում մեղադրյալի կողմից հնարավոր՝ ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը ներկայումս խիստ նվազ է, ուստի նրա օրինական վարքագծի ապահովումը հնարավոր է երաշխավորել նաև այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ:

Այս համալրաբերում հարկ է նաև նկատել, որ քրեական գործի նյութերում առկա է նրև փաստ, տեղեկություն կամ ապացույց, որ մեղադրյալ [REDACTED], քրեական դատավարությանը մասնակցող նրև անձի նկատմամբ անօրինական ազդեցություն է գործադրել կամ այդպիսի փորձ է կատարել, առավել ևս, երբ տեսականորեն այդպիսի հնարավորություն նա ունեցել է: Մասնավորապես՝ 2020 թվականի օգոստոսի 25-ին թիվ [REDACTED] քրեական վարույթն իրականացրած քննիչ [REDACTED] միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարան՝ [REDACTED]

[REDACTED] գրասենյակային տարածքներում, այդ թվում՝ ընկերության գործադիր տնօրեն [REDACTED] և մյուս աշխատակիցների աշխատասենյակներում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ, որը բավարարվել է:

Այնուհետև, 2020 թվականի օգոստոսի 25-ին թիվ [REDACTED] քրեական վարույթն իրականացրած քննիչ [REDACTED] միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարան՝ [REDACTED]

ընկերության գրասենյակային տարածքներում, այդ թվում՝ ընկերության գործադիր տնօրեն [REDACTED] և մյուս աշխատակիցների աշխատասենյակներում, դրանց կից օժանդակ և տնտեսական շինություններում խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ, որը նույնպես բավարարվել է:

Դատարանի որոշման հիման վրա, ի թիվս այլոց, խուզարկություն է կատարվել նաև մեղադրյալ [REDACTED] աշխատասենյակում:

Հետագայում [REDACTED] կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու միջնորդությունը բավարարելու մասին Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման դեմ:

Ինչպես բխում է «Խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումներից, դրանց դեմ բերված բողոքներից (այդ թվում՝ [REDACTED] կողմից), դրանք քննության առնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի ու ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներից, դրանցում նկարագրված գործի փաստական հանգամանքները, ընդհանուր գծերով, նույնական են [REDACTED] նկատմամբ 2024 թվականի սեպտեմբերի 5-ին հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին հսկող դատախազի որոշմամբ շարադրված հանգամանքների հետ:

Այլ խոսքով, առնվազն 2020 թվականի օգոստոսի ամսից մեղադրյալ [REDACTED], ընդհանուր գծերով, տեղյակ է եղել նախաձեռնված քրեական վարույթի (հարուցված քրեական գործի) և քննության ենթակա հանգամանքների մասին, այդուհանդերձ նրա կողմից քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու վերաբերյալ որևէ տվյալ ոչ միայն Դատարանին չի ներկայացրել, այլև [REDACTED] կողմից այդ մասին տեղեկանալը, ինքնին, քրեական վարույթին խոչընդոտելու հավանականությունը չի բարձրացրել այն աստիճան, որպեսզի արգելք հանդիսանա հետագա նախաքննության ընթացքում՝ առանձնապես ծանր ենթադրյալ հանցանքի կատարմանը մեղադրյալ [REDACTED] առնչությունը հիմնավորող փաստական տվյալների ձեռքբերման համար:

Վերոգրյալի, ինչպես նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ մեղադրյալը՝ նախկինում, ըստ էության, ունեցել է իրական հնարավորություն անօրինական ազդեցություն գործադրելու քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ, սակայն որևէ ազդեցություն ենթադրաբար չի գործադրել, Դատարանը ողջամիտ հետևության է հանգում առ այն, որ ներկայումս մեղադրյալի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հավանականությունն առնվազն այն աստիճան բարձր չէ, որպեսզի արդարացված համարվի նրա նկատմամբ ամենախիստ խափանման միջոցի շարունակական կիրառումը:

Բացի այդ, քրեական դատավարության որևէ մասնակցի նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու հավանականությունը գնահատելու տեսանկյունից հարկ է փաստել նաև, որ քրեական հետապնդման մարմինը մեղադրյալ [REDACTED] հետ մինչ օրս որևէ առերեսում չի կատարել (հակառակի մասին վկայող որևէ տվյալ Դատարանին չի ներկայացվել), ինչով առերևույթ փաստվում է, որ մեղադրանքի կողմի գնահատմամբ մեղադրյալ [REDACTED] և գործով անցնող մյուս անձանց ցուցմունքներում հակասություններ առկա չեն եղել:

Ինչ վերաբերում է այլ եղանակով ազդելու հնարավորությանը, ապա Դատարանի համոզմամբ՝ նույնիսկ մեծ ցանկության դեպքում, մեղադրյալ [REDACTED] չի կարող փոխել արդեն իսկ սրացված գրությունների կամ տարբեր զննությունների արձանագրությունների, արտավարությանին փաստաթղթերի բովանդակությունը, կամ փոխել ապացույց ճանաչված այլ փաստաթղթերը:

Անդրադառնալով նաև վարույթի իրականացնող Քննչի այն պնդմանը, ըստ որի՝ նախաքննությունը գրավում է ապացույցների հավաքման ակտիվ փուլում և դեռևս անհրաժեշտ է հարցաքննել [REDACTED] ՄՊ ընկերությունների հետ այս կամ այն կերպ առնչություն և գործարքներում մասնակցություն ունեցած, դրանց կնքման իրական հանգամանքներից տեղյակ, ինչպես նաև « [REDACTED] [REDACTED] ընկերության ղեկավար անձանց, բոլոր

բաժնետերերին, այլ աշխատակիցներին, Դատարանը հարկ է համարում փաստել, որ այն չի դիմանում որևէ քննադատության՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ թիվ [REDACTED] քրեական վարույթը նախաձեռնվել է շուրջ 6 (վեց) տարի առաջ՝ 2018 թվականի հուլիսի 2-ին, իսկ թիվ [REDACTED] քրեական վարույթի հետք մեկ վարույթում միացված թիվ [REDACTED] քրեական վարույթը՝ 2024 թվականի օգոստոսի 6-ին, որպիսի պայմաններում, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նախաքննությունն իրականացվում է քննչական խմբի կողմից, որում ներգրավված են մեկ տասնյակից ավելի քննիչներ, վարույթն իրականացնող մարմինը՝ առնվազն 2024 թվականի օգոստոսի 6-ից սկսած բավարար ժամանակ է ունեցել ենթադրյալ հանցագործության դեպքի մասին տեղյակ անձանց հարցաքննելու համար, հետևաբար՝ համապատասխան ապացուցողական և վարույթային այլ գործողությունները ժամանակին չկատարելու հանգամանքը չի կարող մեկնաբանվել որպես՝ մեղադրյալի նկատմամբ ամենախիստ խափանման միջոցի շարունակական կիրառման արդարացում:

Ընդ որում, հարկանշական է նաև այն հանգամանքը, որ մեղադրյալ [REDACTED] [REDACTED] նկատմամբ կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու մասին՝ 2024 թվականի հոկտեմբերի 11-ի միջնորդությամբ վարույթն իրականացնող քննիչը մեղադրյալին շարունակական կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը կրկին պայմանավորել է [REDACTED] ՍՊ ընկերությունների հետ այս կամ այն կերպ առնչություն և գործարքներում մասնակցություն ունեցած, դրանց կնքման իրական հանգամանքներից տեղյակ, ինչպես նաև [REDACTED] [REDACTED] ընկերության ղեկավար անձանց, բոլոր բաժնետերերին ու այլ աշխատակիցներին հարցաքննելու անհրաժեշտությամբ, որպիսի հանգամանքի հաշվառմամբ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը ներկայացված միջնորդությունը բավարարել է, մինչդեռ վարույթն իրականացնող քննիչը բավարար ջանք չի գործադրել հիշյալ անձանց հարցաքննելու միջոցով կալանավորման՝ վկայակոչված հիմքը չեզոքացնելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է քրեական վարույթով մեղադրյալներից [REDACTED] հետ [REDACTED] փոխկապակցված լինելու և ըստ այդմ՝ նրա հետ միասնական դիրքորոշում ձևավորելու հավանականության վերաբերյալ վարույթն իրականացնող քննիչի ու հսկող դատախազների պնդումներին, Դատարանը կարծում է, որ վկայակոչված նպատակով (հիմքով) մեղադրյալ [REDACTED] շարունակական կալանքի տակ պահելը, քիչ հավանական է, որ դրա զսպման կամ չեզոքացման գործիք կարող է հանդիսանալ, քանզի մեղադրյալ [REDACTED]՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելու պայմաններում վերջինիս հետ միասնական դիրքորոշում ձևավորելու միակ ողջամիտ միջոցը հաղորդակցության ուղին է, որից մեղադրյալ [REDACTED]՝ նրա հաղորդակցվելու իրավունքը

սահմանափակված չլինելու պայմաններում հնարավորություն է ունեցել օգտվել նաև նախորդ երեք ամիսների ընթացքում քրեակարարողական հիմնարկում գրնվելիս:

Անդրադատնալով նաև մեղադրյալի կողմից վկա [REDACTED] հետ միասնական դիրքորոշում ձևավորելու հավանականության վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի և հսկող դատախազների դատողություններին՝ Դատարանը հարկ է համարում նկատել, որ [REDACTED] մասին հիշատակում առկա է նաև 2020 թվականի օգոստոսի 25-ի՝ խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու մասին քննիչ [REDACTED] միջնորդության և այն բավարարելու մասին դատարանի որոշման մեջ, որպիսի հանգամանքի, ինչպես նաև [REDACTED] մեղադրյալ [REDACTED] կնոջ եղբայրը հանդիսանալու փաստի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ նշված նպատակով մեղադրյալին շարունակական կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը նույնպես բացակայում է՝ նկատի ունենալով, որ մեղադրյալը, ըստ էության, բավարար ժամանակ և հնարավորություն ունեցել է՝ 2020 թվականի օգոստոս ամսից սկսած՝ ցանկության դեպքում [REDACTED] հետ միասնական դիրքորոշում ձևավորելու համար:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Դատարանը հարկ է համարում փաստել, որ ներկայացված միջնորդությամբ կալանավորման հիմքի մասով Քննիչը բավարարվել է միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված օրենսդրական ձևակերպումների պարզ շարադրմամբ կատարված ընդհանրական դատողություններով ու իր կանխատեսած հիմքի առկայությունը չի պարզառաքանել փաստական հանգամանքների հիման վրա կատարված ողջամիտ ենթադրություններով: Մինչդեռ, այդպիսի հերևություններն ու ողջամիտ ենթադրությունները պետք է հիմնավորված լինեն գործի շարունակական փաստական րվյալներով, որպիսի պայմաններում միայն անձին՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքից՝ ազատությունից զրկելը կարող է համարվել իրավաչափ:

Հարկանշական է, որ այս առումով Քննիչը վերլուծության չի ենթարկել նախկինում երբևէ չդատապարտված, ազատազրկում չկրած, բարձրագույն իրավաբանական կրթություն և արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող անձի հնարավոր դատավարական վարքագծի վրա եռամսյա մինչդատական կալանքի ազդեցությունը, մինչդեռ ակնհայտ է, որ խափանման միջոցի այսպիսի տեսակի կիրառումը մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալի ոչ պարզաճ դատավարական վարքագիծը կանխելու նպատակ ունենալուց զատ, նպաստում է նաև ենթադրվող հավանական վարքագծի կարգավորմանը:

Դատարանի համար անհասկանալի է նաև՝ դեռևս չհարցաքննված անձանց նկատմամբ մեղադրյալի կողմից անօրինական ազդեցություն գործադրելու հավանականության կասկածողությամբ Քննիչի կատարած եզրահանգումը՝ նկատի

ունենալով այն հանգամանքը, որ դեռևս չհարցաքննված անձինք՝ այս պահին, նախ, չեն կարող հանդիսանալ դատավարության մասնակիցներ, բացի այդ, Քննչի կողմից չի կոնկրետացվել, թե ինչպես կարող է արտահայտվել նրանց նկատմամբ ցուցմունք տալուց հրաժարվելու կապակցությամբ դրսևորվող հավանական ներգործությունը, եթե հարցաքննվող անձն, օրինակ, օժտված չէ այդպիսի դատավարական արարողությամբ: Հետևաբար, Քննչի այդ դատողությունը կարող է հանդիսանալ ցանկացած մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կամ դրա ժամկետը երկարաձգելու պահեստային պարճառաբանություն, ինչը Դատարանի համար ընդունելի չէ:

Միջնորդությամբ բավարար վերլուծության չի ենթարկվել նաև ազատության սահմանափակման հետ չկապված այլընտրանքային խափանման միջոցների կիրառմամբ մեղադրյալ [REDACTED] հետագա դատավարական պարշաճ վարքագծի ապահովման անհնարինությունը և շարունակական կալանքի՝ որպես ամենախիստ միջոցի կիրառման անխուսափելիությունը: Քննչը դարձյալ բավարարվել է այդպիսի անհնարինության վերաբերյալ վերացական եզրահանգումներ կատարելով, մինչդեռ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն նախադեպային դիրքորոշման համաձայն՝ այդպիսի գործելակերպը կարող է արդարացվել, երբ այլ՝ ներգործության ուժով նվազ միջոցների կիրառելիությունը քննարկվել է և որոշվել, որ դրանք բավարար չեն մասնավոր կամ հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու համար, ինչը պահանջել է անձի կալանավորումը:

Վերացական դատողություններով Քննչը խախտել է նախադեպային իրավունքում ձևավորված համապարտադիր պահանջն առ այն, որ կանխավարկածը միշտ պետք է գործի հոգուր ազատ արձակման, մինչդեռ նախընտրելի է համարել անազատության մեջ պահելու կանխավարկածը՝ կասկածի տակ դնելով այդ թվում՝ այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու պիտանիությունը:

Միջնորդությամբ մեղադրյալին վերագրվող արարքների բնույթի ու հանրային վրանգավորության աստիճանի գնահատման համարեքստում Քննչի կողմից հաշվի չեն առնվել խափանման միջոցի տեսակն անհատականացնող՝ մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները, այդ թվում՝ մեղադրյալի՝ նախկինում դատապարտված չլինելը, մշտական բնակության վայր, բարձրագույն կրթություն, կին, զավակ, թոռ, առողջական խնդիրներ ունենալը և այլն:

Եշված հանգամանքները Քննչի կողմից փաստացի չեն գնահատվել մեղադրյալի՝ ոչ պարշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունն էականորեն նվազեցնելու համարեքստում:

Այսպիսով, քրեական գործում առկա փաստական փյույվները հիմք են տալիս եզրահանգելու, որ ժամանակի ընթացքում մեղադրյալ [REDACTED] կողմից հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերը որակական առումով

ենթարկվել են այնպիսի փոփոխությունների, որը Դատարանին հնարավորություն է տալիս իրավաչափ հետևություն անել այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու հարցում:

(...) Մեղադրյալ [REDACTED] սույն միջնորդությունը քննելու օրվա դրությամբ արդեն 3 (երեք) ամիս գտնվում է կալանքի տակ: Գաղտնիք չէ, որ նախնական կալանքի տակ անձինք պահվում են փակ տիպի (խիստ ուժեղ) քրեակարարողական հիմնարկներում (բարձր անվտանգային գոտու խիստ պայմաններում):

Մեղադրյալ [REDACTED] շարունակական կալանավորման պայմաններում նրա ազատության իրավունքի հաղթահարման շեղք ներկայումս պետք է ավելի բարձր լինի: Այսինքն՝ ավելի է կարևորվում մեղադրյալի ազատ արձակվելու իրավունքը, մեծացել է անձի անձնական ազատության սահմանափակումը վերացնելու անհրաժեշտությունը, իսկ նրան արգելանքի տակ պահելու հանրային շահը նվազել է:

Խափանման միջոց կալանքն արդեն 3 (երեք) ամիս կիրառված լինելու պայմաններում մեղադրյալ [REDACTED] նկատմամբ դրա ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության հարցը քննարկելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել նաև ներքոհիշյալ հանգամանքները.

Մեղադրյալի անձը և ընտանեկան դրությունը՝ [REDACTED] չունի դատվածություն, ամուսնացած է, ունի կին, զավակ և թոռ.

Բնակության մշտական վայրի առկայությունը՝ [REDACTED] ունի մշտական բնակության և հաշվառման վայր, որը հայտնի է իրավապահ մարմիններին.

Որպես այլ էական հանգամանք կարող է գնահատվել այն, որ մեղադրյալ [REDACTED] ունի առողջական խնդիրներ և ըստ ՀՀ ԱՆ «Քրեակարարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ 2024 թվականի դեկտեմբերի 18-ի գրության՝ նրա առողջական վիճակը գնահատվել է միջին ծանրության:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ տվյալ դեպքում առկա չէ այնպիսի վտանգ, որը հնարավոր է զսպել բացառապես կալանքի կիրառման միջոցով. այդպիսի վտանգը հնարավոր է զսպել այլընտրանքային խափանման միջոցի, մասնավորապես՝ տնային կալանքի կիրառմամբ:

Տնային կալանքը կիրառելիս Դատարանը հաշվի է առնում մեղադրյալ [REDACTED] վերագրվող արարքների ծանրությունը (այդ թվում՝ նաև առանձնապես ծանր հանցանքի կատարում), ինչպես նաև փաստական կողմը:

Դատարանը գտնում է, որ մեղադրյալ [REDACTED] նկատմամբ տնային կալանք կիրառելով և արգելելով նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ ունենալը, հաղորդակցության այլ ձևերից, այդ թվում՝ փոստային առաքանուց օգտվելը, այլ անձանց հետ շփում ունենալը (բացի իր բնակության վայրի՝ [REDACTED])

■ հասցեում հաշվառված և այդպես փաստացի բնակվող ընտանիքի անդամներից), բնակության վայրում այլ անձանց հյուրընկալելը, բավարար կարող է լինել քրեական վարույթին խոչընդոտելու, այդ թվում՝ ապացուցման գործընթացին ապօրինի միջամտելու ռիսկը չեզոքացնելու համար:

(...) Դատարանն արձանագրում է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ մեղադրյալի անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածում դրսևորվել է պարզաճ ջանասիրություն, քանի որ կատարվել են մի շարք ապացուցողական և վարույթային այլ գործողություններ (մասնավորապես՝ հարցաքննություն, առգրավում, թվային խուզարկություն և այլն):

Դատարանն արձանագրում է նաև, որ այն դեպքում, երբ քրեական վարույթն իրականացվում է այնպիսի ենթադրյալ հանցագործության դեպքի առթիվ, որով անցնում են մի քանի մեղադրյալներ, ապա պարզաճ ջանասիրություն դրսևորելու հարցը պետք է քննարկել ոչ թե կոնկրետ մեղադրյալի մասով և նրա հետ այս կամ այն քննչական կամ վարույթային այլ գործողություններ կատարելու համարեքսպում, այլ ամբողջ վարույթով իրականացվող քննության համարեքսպում:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը, ընդունելի չհամարելով պարզաճ ջանասիրության բացակայության վերաբերյալ պաշտպանների պնդումները, գտնում է, որ սույն գործի հանգամանքների պայմաններում, հիմք ընդունելով նաև կալանավորման հիմքերն ու պայմանները, մեղադրանքի ծանրությունը և գործի այլ հանգամանքները, վարույթն իրականացնող քննիչի դրսևորած ջանասիրությունը կարող է գնահատվել բավարար:

Այսպիսով, թեև առկա են մեղադրյալ ■ նկարմամբ կալանքը կիրառելու պայմանն ու հիմքը, ինչպես նաև ենթադրյալ իրավախախտմանն առնչություն ունենալու հիմնավոր կասկածը, այդուհանդերձ, Դատարանը չի կարող փաստել, որ այլընտրանքային խափանման միջոցների կիրառման մերժումը կարող է լինել արդարացված՝ մարմանն ընդունելով ու կոնկրետ փաստերով հիմնավորելով, որ այլընտրանքային խափանման միջոցներն ի գործ չեն կանխել անձի ոչ իրավաչափ վարքագիծը: Մասնավորապես՝ հնարավոր չէ փաստել, որ գործի քննությանը խոչընդոտելու վրանգը՝ առկա ու վերը թվարկված հանգամանքներում և պայմաններում այնչափ մեծ ու էական է, որ այլընտրանքային խափանման միջոց տրամադրելու կալանքի կիրառմամբ չի կարող ապահովվել մեղադրյալի օրինական վարքագիծը:

Դատարանը նաև հարկ է համարում արձանագրել, որ մեղադրյալ ■ ■ նկարմամբ այլընտրանքային խափանման միջոցի կիրառումը թույլատրելի ճանաչելու վերաբերյալ որոշումը՝ մեղադրյալի կողմից ցանկացած ոչ

պարշաճ վարքագիծ դրսևորելու դեպքում կարող է փոխարինվել առավել խիստ ու պիտանի խափանման միջոցով:(...)»²:

11. Վերաքննիչ դատարանը վիճարկվող որոշմամբ արձանագրել է. «(...) Անդրադառնալով արդեն պաշտպանների կողմից բարձրացված հիմնավոր կասկածի առկայության հարցին՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ դրա չափանիշի վերաբերյալ Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի 1997 թվականի նոյեմբերի 27-ի վճռի 57-րդ կետում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հայտնել է.

«Ողջամիտ կասկածի չափանիշը հիմնվում է «փաստերի կամ փեղեկությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կրային անաչառ դիրորդին եզրակացնելու, որ տվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինել հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը կամ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելը հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում»: (...)

Հայտուկ վերանայման բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում սրուգման ենթարկելով Առաջին արյանի դատարանի՝ վիճարկվող որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը և, անդրադառնալով [REDACTED] [REDACTED]՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին և 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) մեղսագրված ենթադրյալ հանցավոր արարքներին նրա առնչության վերաբերյալ հիմնավոր կասկածի բացակայության մասին պաշտպանների փաստարկներին, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դրանք հիմնավոր չեն, քանի որ Վերաքննիչ դատարանի գնահատմամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից Առաջին արյանի դատարան ներկայացված և դատական ակտի հիմքում դրված նյութերը պարունակում են բավարար չափով փաստական տվյալներ և փեղեկություններ, որոնք հնարավորություն են տալիս անաչառ դիրորդին եզրակացնելու, որ [REDACTED] հնարավոր է, որ կատարած լինի իրեն մեղսագրվող հանցանքները: Հիմք ընդունելով ներկայացված փաստական տվյալները, Առաջին արյանի դատարանն իր դատական ակտում այս առումով հանգել է իրավաչափ հետևության առ այն, որ քրեական վարույթի քննության այս փուլում հիմնավոր կասկածի առկայության ապացուցման չափանիշների շրջանակում առկա են բավարար տվյալներ հիմնավոր կասկածի շարունակական առկայությունը հաստատված համարելու համար:

Ինչ վերաբերում է հիմնավոր կասկածի բացակայության վերաբերյալ պաշտպանական կողմի բարձրացրած մյուս փաստարկներին՝ Վերաքննիչ

² Տե՛ս նյութեր, հատոր 9-րդ, թերթեր 1-138:

դատարանը փաստում է, որ մինչդարձական վարույթի դատական երաշխիքները չեն հերասանում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հերազուրելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը սրուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ: Պաշտպանների կողմից բարձրացված հարցերը, ոչ այլ ինչ են, քան իրենց պաշտպանյալին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների, ապացույցների հերքում կամ առնվազն վիճարկում, դրանց համադրության և գնահատման մասին դատողություններ, ինչը բնորոշ է դատավարական այս փուլին և կարող է քննարկման առարկա դառնալ գործն ըստ էության քննելու ժամանակ՝ համապատասխան դատավարական կարգի համաձայն:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ անձի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է և կիրառելի է ոչ թե հիմնավոր կասկածը, այլ անձի մեղքը հավաստելիս: Եվ այդ համարեքստում Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ներկայացված փաստական տվյալները դատավարության սույն փուլում՝ տվյալ հարցի քննարկմամբ, համակցության մեջ գնահատման արդյունքում բավարար են հիմնավոր կասկածի շարունակական առկայությունը հաստատելու համար:

Այս առումով Վերաքննիչ դատարանի համար ընդունելի չեն նաև նախագահող դատավորի կողմից նախկինում որևէ այլ քրեական գործով՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածին տրված մեկնաբանությունների առնչությամբ պաշտպանի կողմից բերված փաստարկները, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված դատողություններն իրականացվել են Առաջին արյանի դատարանում՝ գործի՝ այն է մեղադրանքի ըստ էության քննության ժամանակ, ինչը նույնական չէ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ այն երկարաձգելու միջնորդությունները քննելիս հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության մասին դատողությունների և դրանց բավարարության չափանիշների հետ:

Վերոշարադրյալի լույսի ներքո Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ պաշտպանի հատուկ վերանայման բողոքի փաստարկները՝ հիմնավոր կասկածի բացակայության առնչությամբ առարկայազուրկ են և ի զորու չեն չեզոքացնելու Առաջին արյանի դատարանի կողմից այս առումով արված իրավաչափ հետևությունները: (...)

Քրեական վարույթն իրականացնող նախաքննական մարմնի կողմից Առաջին արյանի դատարան ներկայացված միջնորդության մեջ՝ որպես մեղադրյալ [REDACTED] նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքի ժամկետի երկարաձգման հիմք մատրնանշել է նաև այն, որ վերջինիս կարող է չկատարել իր վրա՝

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրված պարտականությունը, որը կարող է դրսևորվել նրա կողմից քրեական վարույթին խոչընդոտելու՝ ներառյալ՝ սպացուցման գործընթացին ապօրինի միջամտելու ձևով, դրսևորելով ոչ իրավաչափ վարքագիծ:

Վերաքննիչ դատարանն այս առումով իր համաձայնությունը հայտնելով նախաքննական մարմնի հետ, արձանագրում է, որ ԿՎԿՍԻ ԴԵԿՐԵՄԻԱՆ Է ԿՎԿՍԻ ՆԿԱՐԱՄԱՆՔ ԸՆԿՐՎԱԾ ԽԱՄԻԱՆՄԱՆ ՄԻՋՈԳ ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԼԵՐԻ ԵՐԿԱՐԱԾՁԳՄԱՆ ՆՉՎԱԾ ԿԻՄՔՐ՝ ՄԻ ՔԱՆԻ ԽԱՆՁԱՄԱՆՔՆԵՐԻԿԵՐԵԼՈՎ:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ, խիստ բարձր է հավանականությունը, որ մնալով ազատության մեջ, մեղադրյալ ԿՎԿՍԻ ԿԱՐՈՂ Է ՄԻՋԱՄԵԼՍԱՍՊԵՐՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱԳԻՆ՝ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԱՂԵԳՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՆԵՐՂՐԱՎԻՄԱԾ ԿԱՄՆԵՐՂՐԱՎԻՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՃԱՆԳ ՎՐԱ, ԱՅՆ Է՝ ՕԳՐՎԵԼՈՎ ԻՐ՝ ԳՈՐԾՈՎ ԱՆԳՆՈՂ ՈՐՈՇԱԿԻ ԱՆՃԱՆԳ շՐՋԱՆԱԿՈՒՄ ՈՒՆԵԳԱԾ ԳՈՐԾՆԱԿԱՆ և ԱՆՃԱՆԱԿԱՆ ԿԱՄԵՐԻԿ, ԿԻՈՐԺԻ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԱՂԵԳՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼ ՆՐԱՆԳ ՎՐԱ՝ ԿԵՐԱԳԱՅՈՒՄ ԻՐ ԽԱՄԱՐ ԲԱՐԵՆԱԿԱՍՐ ԳՈՐԾՆՈՒՆՔՆԵՐ ՎՐԱՆՈՒՄ, ԱՆԿԱԽ ԱՅՆ ԽԱՆՁԱՄԱՆՔԻԿ, ԹԵ ԽԱՐԳԱՔՆՆՎԱԾ ԵՆ ԱՐԴՈՐ ՎԵՐՋԻՆՆԵՐԱ, ԹԵ՝ ՈՇ, ՈՐԱՅԻՆ ԽԱՆՁԱՄԱՆՔՐ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԹՈՅՂ Է ՎՐԱՅԻ ՈՂՋԱՄԻՐ ԴԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼՈՒ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌՅՆ ՎՈՒՂՈՒՄ ՆՐԱ ՈՇ ՎԱՐՋԱԾ ՎԱՐՔԱԳԻԾՐ ԿԱՆԻԵԼ ԽԱՐԱՎՈՐ Է ՄԻԱՅՆ՝ ՄԵԼԱԴՐՅԱԼ ԿՎԿՍԻ ՆԿԱՐԱՄԱՆՔ ԸՆԿՐՎԱԾ ԽԱՄԻԱՆՄԱՆ ՄԻՋՈԳ ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԼԵՐԵՐ ԵՐԿԱՐԱԾՁԳԵԼՈՒ ՄԻՋՈԳՈՎ:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ԿՎԿՍԻ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԱՐԱՐՔՆԵՐԻԿ ՄԵԼՐ ԴԱՍՎՈՒՄ Է ԱՅՆԱՅԻՆ ԽԱՆԳԱՆՔՆԵՐԻ ՉԱՐՔԻՆ, ՈՐՈՆՔ ԱՌԱՆՃԱՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆԳ «ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՎՈՒՇԱԽԱՎԵՐ» ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹՈՎ և ՊՐԱՆԳ ԼԱՐԵՆԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼ ԲԱՐԺՐ ԱՍԻՐԻՃԱՆՈՎ ՎԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԽԱՄԱՐ ԷՄԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵԳՈՂ ԲՈՂՈՐ ԽԱՆՁԱՄԱՆՔՆԵՐԻ ՎԱՐՁՈՒՄ ՈՒ ԽԱՐԱՐԱՐՈՒՄՆ ԿԱԽԱՆՋՈՒՄ Է ԱՌԱՎԵԼ ՄԵԾ ՋԱՆՔՆԵՐ ՈՒ ՄԻՋՈԳՆԵՐ, ԽԱՐԿԱՄԵՍ, ՈՐ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆԳԱՆՔԻ ԱՌԵՐԼՈՒՅԹ ԿԱՐԱՐՈՒՄՆ ԿԱՎՈՒՄ Է ԱՅՆ ԿԱՄ ԱՅՆ չԱՄԻՈՎ ԲԱՐԺՐ ԿԱՄ ԷՄԿԱՆ ՎԱՐՋԱԿԱՆ ԼԾԱԿՆԵՐՈՎ ՕԺՐՎԱԾ ԿԱՄ ՎԱՇՎՈՆ ԳՐԱՂԵԳՐԱԾ ԱՆՃԻ ԱՆՎԱՆ ԿԵՐ, ԻՆՆՐ ձևավորում է կասկած, որ անձը կարող է ապօրինի միջամտել սպացուցման գործընթացին:

Ընդ որում, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ նշված ԽԱՆԳԱՆՔՆԵՐԻ ԴԵԿՐՈՒՄ ԱՍՊԱԳՈՒԳՆԵՐԻ ԽԱՎԱՔՄԱՆ և ԽԱՆԳԱՎՈՐ ՆԱԿԱՐԱԿԻ ԲԱԳԱԽԱՅՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱԳՐ ԲԱՎԱԿԱՆԻՆ ԲԱՐՂ ԽՆԴԻՐ Է, և նման վայրամեններում կարևորվում է այն, որ գոնե սպացույցների ձեռքբերման շրջանում չլինեն նախադրյալներ՝ համաձայնեցված գործելու համար, որաչափ կախանջը սույն դեպքում չի պահպանվել:

Վերաքննիչ դատարանը նաև ընդգծում է, որ Առաջին արյանի դատարանը, ի թիվս այլնի, պարզաճ գնահատականի չի արժանացրել նաև այն, որ դատական ակտը

կայացնելիս քրեական վարույթը [REDACTED] մասով դեռևս գտնվել է որոշակիորեն ակտիվ՝ ապացույցների հավաքման փուլում: Ավելին, Առաջին արյանի դատարանը, գիտակցելով այն փաստը, որ մեղադրյալը տնային կալանքի պայմաններում կարող է շփում ունենալ մերձավոր ազգականների հետ, անդամ է այն հանգամանքը, որ քննության առարկա վարույթով վկայի կարգավիճակ ունի վերջինիս աներորդին՝ [REDACTED], որի հետ մշտական, անհուշընդուր և անթույլատրելի կապը կարող են ապահովել մեղադրյալի հետ նույն հասցեում բնակվող մերձավոր ազգականները: Մինչդեռ, կալանքի տակ գտնվելու դեպքում՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ առկա է մեղադրյալի հետ տնային կապերի լուրջ խախտումներ ունենալու արգելք, այդուամենայնիվ, հնարավոր է վերահսկել վերջինիս մոտ այցելության եկած նաև մերձավոր ազգականների թե՛ տնային կապերի հաճախականությունը և թե՛ դրանց անցկացման որոշակի սահմանափակումներով պայմանավորված՝ [REDACTED] կողմից որևէ մեկի մոտ առկա էլեկտրոնային սարքերից օգտվելու հնարավորությունը, ինչը որևէ կերպ հնարավոր է երաշխավորել տնային կալանք խախտման միջոցի պայմաններում: Այս առումով հարկ է փաստել, որ թեև միջնորդություն հարուցած քննիչը Առաջին արյանի դատարանին խնդրել է նաև սահմանափակել [REDACTED]՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը, սակայն գործի քննությանը մասնակցած դատախազները՝ դատական նիստում հրաժարվել են այդ պահանջից, ուստի, դատարանը գտնում է, որ այդ մասով քննիչի միջնորդությունը ենթակա է բավարարման:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին արյանի դատարանը բավարար չափով գնահատման չի ենթարկել մեղադրյալի անձը քննությանը հարկանիշները: Մասնավորապես, հաշվի չի առել մեղադրյալ [REDACTED]՝ նախկինում [REDACTED] գրադեցրած պաշտոնական դիրքը և դրանով պայմանավորված՝ վերջինիս և կոմբինատի աշխատակիցների, այդ թվում՝ ղեկավար անձնակազմի, միջև ձևավորված կայուն սոցիալական կապերի առկայությունը: Միևնույն ժամանակ, քննարկվող դեպքում Վերաքննիչ դատարանը չի կարող հաշվի չառնել ենթադրաբար խախտված հասարակական հարաբերության բնույթն ու կարևորությունը, վերագրվող արարքների ծանրության ստիգմանը, ենթադրյալ կատարման եղանակը, ենթադրաբար պատճառված նյութական վնասի չափը, ինչպես նաև՝ ակնկալվող պարտի հավանական ազդեցությունը վերջինիս վարքագծի վրա:

Այս համալրաբար Վերաքննիչ դատարանի համար հիմնավոր են Դատախազի փաստարկներն առ այն, որ՝ «(...) Դատարանի կողմից մեջբերված գրավոր ապացույցներին զուգահեռ նախաքննությամբ ձեռք են բերվել ու դեռևս պլանավորվում են ձեռք բերվել նաև այնպիսի ապացույցներ, որոնց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու հավանականությունն ամենևին էլ

բացատրված չէ: Մասնավորապես, նախաքննությանը հարցաքննվել են անձինք, որոնց կողմից փրված ցուցմունքները ևս հիշյալ գրավոր ապացույցների հետ համակցության մեջ հիմնավորում են մեղադրյալին ներկայացված մեղադրանքը, հետևաբար՝ դրանց նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու հավանականությունն անհնար է պայմանավորել այն հանգամանքով, որ առկա են ապացույցներ, որոնց բովանդակությունն օբյեկտիվ իրականության մեջ փոփոխելն անհնար է: Ասվածն առավել առարկայական դարձնելու նպատակով, որպես նախադրյալով հարցաքննություն, օրինակ՝ կարող ենք նշել [REDACTED] հարցաքննությունը, ով հանդիսացել է [REDACTED] հանցակիցներ [REDACTED] և [REDACTED] [REDACTED] միջև կապն ապահովողը: Շման պայմաններում առավել քան հավանական է վերջինիս նկատմամբ անօրինական ազդեցություն գործադրելու հավանականությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեղադրյալի կողմից, ի թիվս մեղադրանքում առկա մի շարք փաստական հանգամանքների, կրթականապես ժխտվում է իր կամ [REDACTED] կողմից [REDACTED] հետ հանցավոր համագործակցությունը: (...) [REDACTED], ում կողմից ղեկավարված ընկերության միջոցներով ֆինանսավորվել է [REDACTED] ընկերությունը [REDACTED] ընկերության բաժնեմասի ձեռքբերումն ապահովելու համար, հանդիսացել է իր կնոջ եղբայրը: Մեղադրյալն ընդունել է նաև, որ բարեկամական կապի մեջ է գտնվում [REDACTED] ընկերության հիմնադիր [REDACTED] հետ, ով սույն քրեական վարույթով հանդիսանում է մեղադրյալ: Մեղադրյալը նշել է նաև, որ ընկերական հարաբերությունների մեջ է գտնվում ենթադրյալ հանցակից [REDACTED] հետ:

Վերոգրյալ բարեկամական և ընկերական կապերի առկայությունն ինքնին բավարար է փաստելու, որ փյոյալ դեպքում առավել քան առարկայական և իրարեհակառակ է մեղադրյալի կողմից միջնորդավորված ազդեցության հնարավորությունը, որի վերահսկման մեխանիզմը փյոյալ դեպքում բացակայում է, մինչդեռ կալանք տեսակի խափանման միջոցի պայմաններում հիշյալ ռիսկերը գաղվում են օրենսդրական կարգավորումների ճնշման ներքո: (...)»:

Վերոգրյալով հանդերձ՝ Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին արյանի դատարանը, անտեսելով սույն գործի փաստական հանգամանքների առանձնահատկությունները, կատարել է գործում առկա փաստերից չբխող ոչ իրավաչափ եզրահանգում, որի արդյունքում եկել է այն համոզման, որ [REDACTED] [REDACTED] հետագա կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը բացակայում է:

Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը համակարծիք չէ Առաջին արյանի դատարանի այն հետևությունների հետ, համաձայն որոնց՝ [REDACTED] գտնվում է շարունակական կալանքի տակ, ելնելով այն փաստից, որ Առաջին արյանի դատարանը բավարար է գնահատել նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի քննության ընթացքում դրսևորած ջանասիրությունը:

Նշված հարցի շուրջ ՀՀ վճարելի դատարանի կողմից ձևավորած նախադեպային իրավունքի լույսի ներքո քննարկման առարկա դարձնելով Առաջին աստիճանի դատարանի հետևությունները, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն քրեական վարույթի ծավալի պարագայում երեք ամիս կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածը չի կարող համարվել շարունակական՝ նույնիսկ հիմք ընդունելով այն իրողությունը, որ կալանք խափանման միջոցը այդ համակարգում համարվում է ամենածանրը և կարող է անձի նկատմամբ կիրառվել որպես ծայրահեղ միջոց և եթե մյուս՝ առավել մեղմ խափանման միջոցները չեն կարող գործունեորեն հանդիսանալ անձի դատավարական վարքագիծն ապահովելու համար: Բացի այդ, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ վերոնշյալ հանգամանքների ամբողջությունը հնարավորություն է տալիս ողջամիտ դատողություն անելու այն մասին, որ տվյալ դեպքում առկա է [REDACTED] նկատմամբ ընդգծված խափանման միջոց կալանքի ժամկետի երկարաձգման անհրաժեշտությունը, իսկ Առաջին աստիճանի դատարանի՝ այս առումով բերված պարզառարարություններն ու եզրահանգումներն իրավաչափ չեն և վերջինիս կողմից թույլ է տրվել վարույթի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում: Հարկ է արձանագրել նաև, որ հիմնավոր չեն նաև պաշտպանության կողմի բերված այն փաստարկները, որ գործը քննվում է դեռևս 2018 թվականից և ավելի քան 6 տարիների ընթացքում չկա արձանագրված մեկ դեպք, որ [REDACTED] փորձել է անօրինական ազդեցություն գործադրել գործով անցնող որևէ անձի վրա: Այս առումով հայտնելով իր անհամաձայնությունը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ անձին ձերբակալելը, ավելին՝ նրան առանձնապես ծանր մեղադրանք ներկայացնելը էապես բարձրացնում է այդ անձի կողմից հետագայում ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու հավանականությունը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ անձը, նախկինում չունենալով կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ չի կարող ունենալ, կամ առնվազն նվազ են նրա կողմից դատավարական ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու մրադրությունները: Մինչդեռ այս դեպքում, ձեռք բերելով մեղադրյալի դատավարական կարգավիճակ՝ էականորեն բարձրացել են [REDACTED] կողմից հետագայում գործի քննությանը միջամրելու ոչ իրավաչափ ռիսկերը, իսկ այն հանգամանքը, որ ձերբակալումից ի վեր մինչև վիճարկվող որոշման կայացումը [REDACTED] գտնվել է եռամսյա կալանքի տակ՝ չի կարող վկայել նրա՝ շարունակական կալանքի տակ գտնվելու մասին՝ հիմք ընդունելով նաև Առաջին աստիճանի և Վերաքննիչ դատարանների մոտ ձևավորված այն կարծիքը, որ քրեական վարույթը մեծածավալ է, իրականացվել են բազմաթիվ ապացուցողական և վարույթային գործողություններ և այդ ընթացքում վարույթն իրականացնող նախաքննական մարմինը դրսևորել է պատշաճ ջանասիրություն գործը քննելու ուղղությամբ: Ավելին, Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ նման տրամաբանության՝ գործի քննությունն ավելի քան 6 տարի շարունակվելու դեպքում,

2024 թվականի սեպտեմբերին [REDACTED] կալանավորելը և կարող էր դիմել ոչ իրավաչափ, միջոցառող վերջինիս կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման և դրանց՝ վերադաս դատական արշանների կողմից իրավաչափությունը ստուգելու պայմաններում, հիմնավոր չէ այն դատողությունը, որ՝ նախ 6 փաթի փուլից նախաքննության պայմաններում անձին կալանավորելու անթույլատրելի է, բացի այդ՝ 2024 թվականի սեպտեմբերին [REDACTED] կալանավորելուց հետո փուլի են ունեցել այնպիսի էական դատավարական փոփոխություններ, որոնք նույն թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ՝ այսինքն 3 ամիս անց բացառում են այլևս վերջինիս կալանքի փակ գնումը հնարավորությունը՝ դրա շարունակական լինելու պարադոքսականությամբ: Նույնը նաև՝ դեռևս 2020 թվականից քրեական վարույթի մասին փեդեկացված լինելու փաստակցությունից:

Վերոգրյալի հիման վրա Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ պաշտպանի կողմից ներկայացված բողոքը և դրանում առկա փաստարկները՝ ավելի մեղմ հասկանման միջոցի կամ միջոցների թույլատրելիության մասով, անհիմն են:

Անդրադառնալով պաշտպանների կողմից՝ [REDACTED] առողջական վիճակով պայմանավորված կալանքի կրման անհնարինության մասին ներկայացված փաստարկներին առ այն, որ՝ «(...) - նման հիվանդություններով տառապող [REDACTED] փնային կալանքի փակ պահելով պետությունը չի կարողանում իրագործել ազատությունից զրկված անձի ֆիզիկական անձեռնմխելիությունը, այդ թվում՝ անհրաժեշտ բժշկական օգնություն փրամադրելու միջոցով, պաշտպանելու իր՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված պարտականությունը,

- նման հիվանդություններով տառապող [REDACTED] կալանքի փակ պահելով՝ վերջինս ենթարկվում է այնպիսի ծանրության տառապանքների կամ զրկանքների, որը գերազանցում է կալանքի փակ գնումը ներհատուկ տառապանքի անխուսափելի աստիճանը,

- պետությունը չի կարողանում [REDACTED] առողջությունն ու բարեկեցությունը պարզաճորեն պահպանել, ի թիվս այլ միջոցների՝ անհրաժեշտ բժշկական օգնություն փրամադրելու թույլտվություն տալու միջոցով (...), Վերաքննիչ դատարանն արձանագրում է հետևյալը.

Թիվ ՀԿԴ/0181/06/24 դատական վարույթի հատոր 8, գ.թ. 70-ում առկա է «Աստիճակ» ԲԿ-ից տրված էպիկրիզ, համաձայն որի՝ «(...) [REDACTED]

[REDACTED]
[REDACTED]
[REDACTED]
[REDACTED]
[REDACTED]
[REDACTED] (...):

2024 թվականի նոյեմբերի 05-ից մինչև նոյեմբերի 25-ը գրնվել է նշված բժշկական հաստատությունում, բուժման արդյունքում վերջինիս

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ նշված էպիկրիզում չկա որևէ նշում՝ սրացիոնսար բուժումը շարունակելու վերաբերյալ:

Հաջորդիվ՝ հափոր 8, գ.թ. 71-ում առկա է «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան թիվ 1 համալսարանական հիվանդանոց անհետաձգելի բուժօգնության բաժին» սրտաբանական կլինիկայի ղեկավարի կողմից փրված փեղեկանքը, համաձայն որի՝ «(...)»

(...)»:

Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ կրկին առկա չէ որևէ նշում, որ հիվանդը կարիք ունի սրացիոնսար բուժման:

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ անազատության մեջ գրնվող անձին պարզաճ բուժօգնության փրամադրումը պետության պոզիտիվ պարտականությունն է: Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ պաշտպանության կողմը մեղադրյալի առողջական վիճակի վերաբերյալ՝ բացառապես քրեակարարողական հիմնարկից դուրս բժշկական օգնություն սրանալու անհրաժեշտության մասին փյալներ ինչպես նախաքննական մարմին, այնպես էլ՝ դատարանին, չի ներկայացրել, բացի այդ, պաշտպանական կողմը մեղադրյալի առողջական վիճակի յուրաքանչյուր նոր փոփոխության դեպքում զրկված չէ համապատասխան քրեակարարողական հիմնարկի վարչակազմին, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնին դիմելու հնարավորությունից: Գործի նյութերից երևում է, որ մեղադրյալն ունի որոշակի առողջական ինդիքներ, որոնց մասին կան համապատասխան բժշկական փեղեկանքներ ու փաստաթղթեր: Մինևույն ժամանակ սակայն, Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ մեղադրյալի՝ անազատության մեջ գրնվելու անհնարինության կամ պարժի կրմանը խոչընդոտելու վերաբերյալ պարզաճ փաստաթուղթը՝ դա համապատասխան լիազոր մարմնի կողմից փրված փորձաքննության եզրակացությունն է, որի պայմաններում, միայն, ինչպես վարույթն իրականացնող նախաքննական մարմինը, այնպես էլ՝ վերջինիս միջնորդությամբ մինչդատարական սրուգում իրականացնող դատարանները կարող են եզրահանգել, որ փյալ անձի մուր առկա են այնպիսի առողջական ինդիքներ, որոնք բացառում են նրա կալանքի փակ մնալը: Վերաքննիչ դատարանը փաստում է, որ

նման փաստաթուղթ պաշտպանների կողմից թե՛ Առաջին արյանի դադարան, և թե՛ Վերաքննիչ դադարան չի ներկայացվել: Հերաբար, Վերաքննիչ դադարանն ընդգծում է, որ մեղադրյալ [REDACTED] մոտ ախտորոշված հիվանդությունները, ներկայումս չեն կարող հիմք հանդիսանալ, դրանց առկայության հիմքով նրան կալանքից ազատելու կամ այլընտրանքային խափանման միջոցներ կիրառելու համար: Ավելին, պաշտպանի ներկայացրած փաստարկներից է հենց բխում, որ իր պաշտպանյալը երբևէ զրկված չի եղել իր նախընտրած բուժ. հաստատություններում բուժ. գննում և բուժում անցնելու հնարավորությունից, ինչը կարող է իրականացվել նաև հեռագայում՝ ըստ անհրաժեշտության: Ավելին, հարկ է արձանագրել, որ վարույթն իրականացնող մարմինը գործունե միջոցներ է ձեռնարկել [REDACTED] առողջական վիճակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն ձեռք բերելու և այդ փաստաթղթերով դադարեցնել հաստատության նշանակելու ուղղությամբ, ինչը ևս վկայում է այն մասին, որ մեղադրյալի առողջական վիճակի վերաբերյալ պաշտպանական կողմի մրահոգությունները գրնվում են նախաքննական մարմնի և դրա նկատմամբ դադարվարական հսկողություն իրականացնող դադարախազների ուշադրության կենտրոնում: Ասվածից զատ, հարկ է արձանագրել, որ այդ նպատակին ուղղված գործառնությունների շրջանակներում հարցաքննվել են նաև [REDACTED] բուժմանը մասնակցած քաղաքացիական հիվանդանոցների բժիշկները, ինչը, սակայն պաշտպանության կողմի մոտ հարուցել է կասկած առ այն, որ վերջիններս ենթարկվում են ճնշման: Այս առումով Վերաքննիչ դադարանը՝ նախ արձանագրում է, որ այդպիսի ճնշումների վերաբերյալ պաշտպանության կողմը որևէ ապացույց չի ներկայացրել, բացի այդ, որևէ քննադատության չի դիմանում պաշտպանության կողմի այն պնդումները, որ բժիշկները կարող էին ճնշման ենթարկվել նախկինում տեղի ունեցած՝ ըստ էության՝ [REDACTED] նախկինում բուժօգնություն ցուցաբերած լինելու առնչությամբ: Այլ խոսքով, Վերաքննիչ դադարանն իրադեասական չի համարում նախկինում տեղի ունեցած որևէ իրադարձության կապակցությամբ որևէ անձի ճնշման ենթարկելու հնարավորությունը՝ հատկապես իրենց մասնագիտական պարտքը կատարող՝ անձին բուժօգնություն ցուցաբերած որևէ բժշկի նկատմամբ:

Քննարկելով պաշտպանների փաստարկն առ այն, որ [REDACTED] վարույթն իրականացնող մարմնի կողմից իր առողջական վիճակի հետ կապված ենթարկվում է խոշտանգումների, Վերաքննիչ դադարանն փաստում է, որ նշվածը զուտ պաշտպանության կողմի սուբյեկտիվ դատողություններն են, որոնք հերքվում են Վերաքննիչ դադարանի կողմից վերևում ներկայացված [REDACTED] բուժման գործընթացի վերաբերյալ փաստարկներով: Միևնույն ժամանակ, պաշտպանության կողմը՝ համապատասխան փաստերի առկայության դեպքում զրկված չէ տվյալ հարցը քննարկման առարկա դարձնել օրենսդրական այլ կառուցակարգերի տիրույթում, մասնավորապես, այդ մասին պարզաձև մարմնին հաղորդում ներկայացնելու միջոցով:

Ինչ վերաբերում է հայրուկ վերանայման բողոքներից բխող մյուս փաստարկներին ու դատողություններին, ապա հարկ է արձանագրել, որ սույն որոշմամբ վերը շարադրված իրավական դիրքորոշումները, վերլուծություններն ու դատողություններն իրենց համակցության մեջ արդեն իսկ ամբողջությամբ ներառում են դրանց վերաբերյալ Վերաքննիչ դատարանի մտրեցումներն ու բարձրացված հարցերի պատասխանները, ուստի լրացուցիչ առանձին-առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Այսպիսով, Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված՝ մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները, որոնք առաջ են բերում անձի ազատության իրավունքի սահմանափակում, հիմնված են վարույթի նյութերից բխող ողջամիտ ենթադրությունների վրա, ուստի մեղադրյալ [REDACTED] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության վերաբերյալ առկա են բավարար փաստարկներ, այսինքն՝ քննիչի միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Հաշվի առնելով վերոգրյալ եզրահանգումները, Վերաքննիչ դատարանը, գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 20-ին կայացված՝ «Կիրառված խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու մասին միջնորդությունը քննելու վերաբերյալ» որոշումը պետք է թեկանել և թիվ [REDACTED] քրեական վարույթով մեղադրյալ [REDACTED] նկատմամբ, որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը 2 (երկու) ամիս ժամկետով երկարաձգել: (...)»³:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

12. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք մեղադրյալ [REDACTED] նկատմամբ որպես այլընտրանքային խափանման միջոց տնային կալանք կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը մասնակի թեկանելու և նրա նկատմամբ մինչ այդ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելու մասին Վերաքննիչ դատարանի հետևությունները:

13. ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...)

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով. (...)»:

³ Տե՛ս նյութեր, հատոր 16-րդ, թերթեր 1-186:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 5-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. (...)

բ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար. (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարույթի ընթացքում անձի նկատմամբ հարկադրանքի միջոցները կարող են կիրառվել ոչ այլ կերպ, քան սույն օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով: Վարույթի ընթացքում անձին ազատությունից զրկելը չպետք է պատժի նպատակ հետապնդի:

2. Վարույթն իրականացնող մարմնին անձի նկատմամբ հարկադրանքի միջոց ընդդեմ առաջնորդվում է նվազագույնի սկզբունքով: Արգելվում է անձի նկատմամբ ընդդեմ ավելի խիստ հարկադրանքի միջոց, քան այն, որով քրեական վարույթի ընթացքում հնարավոր կլինի ապահովել անձի օրինական վարքագիծը»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Խախտման միջոցը կարող է կիրառվել, եթե դա անհրաժեշտ է՝

1) մեղադրյալի փախուստը կանխելու համար կամ

2) մեղադրյալի կողմից հանցանք կատարելը կանխելու համար կամ

3) մեղադրյալի կողմից իր վրա սույն օրենսգրքով կամ դատարանի որոշմամբ դրված պարտականությունների կատարումն ապահովելու համար»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Խախտման միջոցի տեսակն ընդդեմ առաջին հաշվի են առնվում մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովող և դրան խոչընդոտող բոլոր հնարավոր հանգամանքները (...):»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլ ընդդեմ առաջին հաշվի խախտման միջոցների կիրառումն անբավարար է սույն օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների կատարումն ապահովելու համար»:

14. ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1480 որոշմամբ արձանագրել է, որ հաշվի առնելով անձի անձնական ազատության իրավունքին կալանավորման

առավել ինտենսիվ միջամտող բնույթը, վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր դեպքում այն ընտրելուց առաջ պարտավոր է պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հիմնավորված կերպով բացատել մնացած բոլոր, ավելի մեղմ խափանման միջոցների ընտրության հնարավորությունը⁴:

Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով⁵:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- [REDACTED] նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով⁶,

- Առաջին ատյանի դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ փաստել է, որ վարույթի նյութերում առկա փաստական հանգամանքները բավարար են նախաքննության տվյալ փուլում հիմնավոր կասկածի շարունակական առկայությունը հաստատված համարելու համար, ինչպես նաև արձանագրել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ մեղադրյալի անազատության մեջ գտնվելու ժամանակահատվածում, դրսևորվել է պատշաճ ջանասիրություն: Անդրադառնալով միջնորդությամբ նշված հիմքերին՝ Առաջին ատյանի դատարանը գտել է, որ քրեական վարույթում առկա փաստական տվյալները հիմք են տալիս եզրահանգելու, որ ժամանակի ընթացքում մեղադրյալ [REDACTED] կողմից հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերը որակական առումով ենթարկվել են այնպիսի փոփոխությունների, որոնք հնարավորություն են տալիս իրավաչափ հետևություն անել այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու հարցում: Արդյունքում Առաջին ատյանի դատարանը գտել է, որ առկա չէ այնպիսի վտանգ, որը հնարավոր է զսպել բացառապես կալանքի

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-1480 որոշումը:

⁵ Տե՛ս, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 և այլ գործերով կայացված որոշումները:

⁶ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

կիրառման միջոցով. այդպիսի վտանգը հնարավոր է գսպել այլընտրանքային խափանման միջոցի, մասնավորապես՝ տնային կալանքի կիրառմամբ⁷:

- Վերաքննիչ դատարանը, մասնակի բեկանելով Առաջին ատյանի դատարանի որոշումը և [REDACTED] նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարաձգելով, բարձր է գնահատել հավանականությունը, որ մնալով ազատության մեջ, մեղադրյալը կարող է միջամտել ապացուցողական գործընթացին՝ անօրինական ազդեցություն գործադրելով քրեական վարույթին ներգրավված կամ ներգրավման ենթակա անձանց վրա, և գտել է, որ վարույթի սույն փուլում նրա ոչ պատշաճ վարքագիծը հնարավոր է կանխել միայն ընտրված խափանման միջոց կալանքի ժամկետը երկարաձգելու միջոցով: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է իրավաչափ հետևության առ այն, որ քրեական վարույթի քննության այս փուլում հիմնավոր կասկածի առկայության ապացուցման չափանիշների շրջանակում առկա են բավարար տվյալներ հիմնավոր կասկածի շարունակական առկայությունը հաստատված համարելու համար⁸:

16. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 13-14-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանների հետևություններն այն մասին, որ քրեական վարույթի քննության այս փուլում առկա են բավարար տվյալներ [REDACTED] կողմից իրեն վերագրվող հանցանքները կատարելու մասին հիմնավոր կասկածի շարունակական առկայությունը հաստատված համարելու համար, հիմնավոր են:

17. Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հիմնավոր չէ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասով, որ [REDACTED] կողմից իր վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դրված պարտականությունը չկատարելու հավանականությունը այնքան բարձր է, որ մեղադրյալի պատշաճ վարքագիծը հնարավոր է ապահովել միայն ամենախիստ խափանման միջոցի կիրառմամբ: Այս մասով Վճռաբեկ դատարանը իր համաձայնությունն է հայտնում Առաջին ատյանի դիրքորոշմանն առ այն, որ սույն վարույթով նախաքննության շուրջ 6 (վեց) տարի տևած լինելը ու հետաքրքիր այդ ընթացքում բազմաթիվ քննչական գործողությունների կատարված լինելը, դեռևս 2020 թվականին [REDACTED] աշխատասենյակում խուզարկություն իրականացնելու փաստական հիմքերի և նրա նկատմամբ 2024 թվականի սեպտեմբերի 5-ի հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ շարադրված փաստական հանգամանքների էության մեջ նույնական լինելը, հիմք են հանդիսանում եզրահանգելու, որ մեղադրյալ [REDACTED] կողմից հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու ռիսկերը որակական առումով ենթարկվել են

⁷ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

⁸ Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

այնպիսի փոփոխությունների, որոնք հնարավորություն են տալիս իրավաչափ հետևություն անել այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ մեղադրյալի օրինական վարքագիծն ապահովելու հարցում⁹:

18. Ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սույն որոշման 7.2-րդ կետում նշված՝ նախաքննական մարմնի կողմից պատշաճ ջանասիրություն չդրսևորելու վերաբերյալ փաստարկին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով կալանքի տակ պահելու ժամկետը երկարաձգելու հարցին, *Ասլան Ավերիսյանի* գործով կայացված որոշման մեջ ընդգծել է, որ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը կարող է երկարացվել հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) շարունակում են առկա լինել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու հիմքերն ու պայմանները, կամ ի հայտ են եկել անձին կալանքի տակ պահելու նոր հիմքեր.

բ) գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից դրսևորվել է անհրաժեշտ ջանասիրություն՝ ապահովելու գործի քննության ընթացքը¹⁰:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով կալանքի ժամկետի երկարացման պայմաններից՝ նախաքննություն իրականացնող մարմնի «անհրաժեշտ ջանասիրությանը», իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ քննության բարդությունը և առանձնահատկությունները գործոններ են, որոնք պետք է հաշվի առնել՝ պարզելու համար, թե արդյոք իրավասու մարմինները վարույթն իրականացրել են «անհրաժեշտ ջանասիրությամբ»¹¹:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նախաքննությունն իրականացնող մարմնի «անհրաժեշտ ջանասիրությունը» կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եզրութաբանությամբ՝ «անհրաժեշտ ջանասիրությունը» (due diligence) մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու պայմաններից է:

Մասնավորապես, հիմնավոր կասկածի կենսունակությունը, համաձայն որի՝ ձերբակալված անձն է կատարել հանցագործությունը sine qua non պայման է կալանքի երկարաձգման օրինականության համար, սակայն ժամանակի ընթացքում այն այլևս բավարար չէ կալանքի երկարաձգումն արդարացնելու համար: Երբ «հիմնավոր կասկածի» առկայությունն այլևս բավարար չէ կալանքի հետագա երկարացման համար, պետք է հիմնավորվի, թե արդյո՞ք անազատության մեջ պահելու հիմքերը

⁹ Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ասլան Ավերիսյանի* գործով 2008 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԱՎԴ/0022/06/08 որոշումը:

¹¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Scott v. Spain* գործով 1996 թվականի դեկտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 21335/93, կետ 75:

շարունակում են լինել «հիմնավոր» և «բավարար», և արդյո՞ք իշխանությունները «անհրաժեշտ ջանասիրություն» են ցուցաբերել գործի քննության ընթացքում¹² :

Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ կալանքի տակ պահելու ժամկետի երկարացման օրինականության ստուգման համատեքստում «անհրաժեշտ ջանասիրության» գնահատումը նպատակ է հետապնդում երաշխավորելու մեղադրյալի ազատության իրավունքը: Այսպես, դատական քննության «սպասող» մեղադրյալի ազատության կանխավարկածի հաղթահարումը չի կարող արդարացվել ավելի երկար ժամանակահատվածով, քան անհրաժեշտ է գործի համակողմանի քննությունն իրականացնելու համար: Ուստի, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունն ապահովելու նկատառումներով անձի ազատության իրավունքը կարող է սահմանափակվել այնքան ժամանակ, քանի դեռ նախաքննական մարմինն ակտիվ քննություն է կատարում գործի հանգամանքների պարզման ուղղությամբ: Կարևոր է ընդգծել, որ անձի ազատության իրավունքի գերակայության գաղափարից ելնելով՝ այդ իրավունքի սահմանափակման ժամանակահատվածում վարույթն իրականացնող նախաքննական մարմինը պետք է քննի գործն անհրաժեշտ ջանասիրությամբ՝ նպատակ հետապնդելով հնարավորինս սեղմ ժամկետում ավարտել գործի նախաքննությունը և գործն ուղարկել դատարան՝ անձի՝ իր վերաբերյալ գործի հրապարակային դատական քննությունն ապահովելու համար: Հակառակ պարագայում, եթե նշված պայմանը պահպանված չէ և գործով ակտիվ նախաքննությունը հարաբերականորեն դադարեցված է, ապա, արտակարգ հանգամանքների բացակայության պարագայում¹³, անձի ազատության իրավունքի շարունակական սահմանափակումն այլևս արդարացված համարվել չի կարող¹⁴:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը սույն դեպքում նախաքննական մարմնի կողմից ձեռնարկված միջոցառումների բավարարությունը գնահատելիս, հաշվի առնելով նաև գործի նախաքննության ընդհանուր տևողությունը, նախաքննության մարմնի միջնորդությանը նախորդած ժամանակահատվածում կատարված և հաջորդող ժամանակահատվածում պլանավորվող քննչական և դատավարական գործողությունների ծավալը, գտնում է, որ նախաքննական մարմինը ներկայացված միջնորդության մեջ ներկայացրել է «անհրաժեշտ ջանասիրության»

¹² Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Magee v. The United Kingdom* գործով 2015 թվականի մայիսի 12-ի որոշումը, գանգատներ թիվ 26289/12, 29062/12, 29891/12, կետ 88:

¹³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Fenech v. Malta* գործով 2021 թվականի մարտի 23-ի որոշումը, գանգատ թիվ 19090/20, կետ 96: Նշված վճռում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում չի արձանագրել, երբ COVID-19 համավարակով պայմանավորված բացառիկ հանգամանքների պայմաններում քրեական վարույթը շուրջ երեք ամիս կասեցված է եղել, սակայն դրանից առաջ և հետո քրեական վարույթը ակտիվ ընթացքի մեջ է գտնվել:

¹⁴ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Աղասի Թաթույյանի* գործով 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ LԴ/0012/06/20 որոշման 14-րդ կետը:

դրսևորումը հիմնավորող նյութեր՝ այնպիսի փաստական տվյալներ, որոնք վկայում են մեղադրյալի՝ ազատության իրավունքի սահմանափակման ժամկետի նախորդ երկարացմանը հաջորդող ժամանակահատվածում ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների մասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ [REDACTED] ազատության իրավունքի սահմանափակման ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելիս և վարույթն իրականացնող մարմնի՝ անհրաժեշտ ջանասիրության առկայությունը հաստատված համարելիս ստորադաս դատարանները պատշաճ իրավական գնահատման են ենթարկել սույն վարույթի փաստական հանգամանքները: Այսպես՝ ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ տվյալ դեպքում նախաքննության մարմինը կատարել է բավարար քննչական և դատավարական գործողություններ, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ սույն վարույթով քննության նկատմամբ նախաքննության մարմնի կողմից «անհրաժեշտ ջանասիրություն» դրսևորելու պայմանը կարող է պահպանված համարվել:

19. Անդրադառնալով բողոքարկի սույն որոշման 7.5-րդ կետում նշված փաստարկին՝ Վճռաբեկ դատարանը, նախ կրկնում է, որ խափանման միջոց կիրառելու ու դրա տեսակի ընտրության իրավաչափության համատեքստում կարևոր է անձի առողջական վիճակի պատշաճ գնահատումը¹⁵: Մինչև ժամանակ, **չբացառելով որոշակի, այդ թվում՝ դժվար բուժվող, հիվանդություններ ունեցող մեղադրյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի կիրառումը, Վճռաբեկ դատարանն այդուհանդերձ անհրաժեշտ է համարում մեղադրյալի առողջական վիճակի գնահատումը՝ նրա նկատմամբ խափանման միջոցի տեսակի ընտրության հարցը քննարկելիս**¹⁶: Դրա հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ցանկացած պարագայում մեղադրյալի հիվանդությունները չեն կարող գնահատման առարկա դառնալ առանձին՝ վերացարկված *in abstracto*, այլ պետք է գնահատվեն խափանման միջոցի կիրառման պայմանների և կոնկրետ գործում առկա փաստական հանգամանքների հետ համադրելով՝ *in concreto*, որպիսի մոտեցումն ուղղակիորեն բխում է նաև Վճռաբեկ դատարանի *Վարդան Մամիկոնյանի* վերաբերյալ որոշմամբ նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումներից, որոնցով սահմանվել է խափանման միջոցի կիրառման համատեքստում դատարանի կողմից պարտադիր գնահատման ենթակա հանգամանքների լայն շրջանակ, այդ թվում նաև՝ անձի առողջական վիճակի վերաբերյալ տվյալների ներառմամբ, որոնց համալիր գնահատումը թույլ կտա

¹⁵ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ [REDACTED] գործով 2025 թվականի ապրիլի 10-ի թիվ ՀԿԴ/0181/06/24 որոշումը:

¹⁶ Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gelfmann v. France* գործով 2004 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 25875/03:

հանգելու որոշակի տեսակ խափանման միջոցի ընտրության վերաբերյալ պատճառաբանված դիրքորոշման¹⁷:

19.1. Վճռաբեկ դատարանը միաժամանակ գտնում է, որ մեղադրյալի մոտ առկա հիվանդությունները պետք է գնահատվեն նաև խափանման միջոցի կիրառման հիմքերի (նպատակների) գնահատման համատեքստում: Մասնավորապես մեղադրյալի առողջական վիճակը՝ պայմանավորված տարբեր հիվանդություններով, կարող է ինքնին նվազեցնել ռիսկն առ այն, որ նա ձեռնամուխ կլինի վարույթին խոչընդոտող ակտիվ գործողությունների կատարման, հատկապես այն պայմաններում, երբ անձի մոտ եղած հիվանդություններն իրենց բնույթով սահմանափակում են անձի որոշակի կարողություններ (օրինակ՝ շարժողական, հաղորդակցման և այլն): Իսկ ինչ վերաբերում է առհասարակ մեղադրյալին ազատությունից զրկելու հնարավորությունը բացառող հիվանդություններին, ապա դրանք հստակորեն սահմանված են «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ ամրագրված կողմնորոշիչ ցանկով: **Ուստի նշված ցանկից դուրս հիվանդության կամ հիվանդությունների առկայությունը չի կարող բացառել մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքի կիրառումը, եթե դա բխել է կոնկրետ վարույթով կալանքի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորող փաստական հանգամանքներից և հիմնավորվել է սույն որոշման նախորդ կետում սահմանված չափանիշներով:** Վճռաբեկ դատարանի նշված մոտեցումը բխում է նաև Եվրոպական դատարանի այն դիրքորոշումից, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես առողջական վիճակի հիմքով կալանավորված անձին ազատ արձակելու կամ նրան քաղաքացիական հիվանդանոց տեղափոխելու ընդհանուր պարտավորություն սահմանող դրույթ, անգամ եթե նա տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հատկապես դժվար է բուժել¹⁸:

20. Վճռաբեկ դատարանը նշված դիրքորոշումները կիրառելով սույն դատական վարույթով, արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը մեղադրյալ [REDACTED] նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարաձգելիս անտեսել է սույն վարույթի փաստական հանգամանքների առանձնահատկությունները, որոնք Վճռաբեկ դատարանի գնահատմամբ բավարար էին հիմնավորված

¹⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վարդան Մամիկոնյանի գործով 2024 թվականի հունիսի 28-ի թիվ ՀԿԴ/0233/06/23 որոշման 12.1-րդ կետը:

¹⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gelfmann v. France* գործով 2004 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 25875/03, կետ 50:

ընթացություն կատարելու առ այն, որ մեղադրյալ [REDACTED] մոտ ախտորոշված հիվանդություններն [REDACTED]

[REDACTED] իրենց համակցության մեջ տվյալ փուլում որոշակիորեն նվազեցրել են նրա կողմից վարույթի պատշաճ ընթացքին խոչընդոտելու ռիսկը:

Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով կոնկրետ վարույթի առանձնահատկությունները (սախաքնությունը տևել է շուրջ 6 (վեց) տարի, որի ընթացքում կատարվել են բազմաթիվ վարույթային գործողություններ, այդ թվում՝ դեռևս 2020 թվականին [REDACTED] ախտաախտակում կատարվել է խուզարկություն՝ նրա նկատմամբ 2024 թվականի սեպտեմբերի 5-ի հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշմամբ շարադրված փաստական հանգամանքների հետ համընկնող փաստական հիմքերով, ինչն ինքնին մեղադրյալի համար կարող էր կանխատեսելի դարձնել իր նկատմամբ ապագայում հնարավոր քրեական հետապնդման հավանականությունը, մինչդեռ վարույթն իրականացնող մարմնի կողմից չի մատնանշվել մեղադրյալի կողմից այդ ժամանակահատվածում վարույթին խոչընդոտելուն ուղղված որևէ արարք), Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրյալ [REDACTED] նկատմամբ այլընտրանքային խափանման միջոցի կիրառմամբ ևս հնարավոր էր հասնել քրեական վարույթի պատշաճ քննության ապահովման հանրային շահի և մեղադրյալի անձնական ազատության միջև արդարացի հավասարակշռությանը՝ ապահովելով նվազագույնի սկզբունքը, որպիսի հետևության, ըստ էության, հանգել է նաև Առաջին ատյանի դատարանը:

21. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, մեղադրյալ [REDACTED] նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու և կալանք խափանման միջոցի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության մասին Վերաքննիչ դատարանի հետևություններն իրավաչափ չեն:

22. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից ներկայացված մյուս փաստարկներին, ապա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մինչդեռ վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս, մասնավորապես՝ անձի իրավունքի սահմանափակում հայցող միջնորդությունը քննելիս, դատարանն իրավասու չէ քննարկման առարկա դարձնելու այնպիսի հարցեր, որոնք պարունակում են քրեական գործի ըստ էության քննությանը բնորոշ՝ արդարադատության իրականացման գործընթացի տարրեր:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, սույն գործով դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել դատական սխալ, որն իր բնույթով էական է, քանի որ հանգեցրել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով նախատեսված՝ հանրայնության սկզբունքի խախտման, ինչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու համար: Մինևսույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքարկված դատական ակտը չի կարող բեկանվել, քանի որ այն եղել է ժամանակավոր և սույն որոշումը կայացնելու պահին կորցրել է իր իրավական նշանակությունը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը պետք է թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ՀԿԴ/0181/06/24 դատական վարույթով մեղադրյալ [REDACTED] [REDACTED] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի փետրվարի 10-ի որոշումը թողնել անփոփոխ՝ հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝

Ա.ԶԻՉՈՅԱՆ

Դատավորներ՝

Ա.ԿՐԿՑԱՇԱՐՅԱՆ

Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Դ.ՎԵՔԻԼՅԱՆ